ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/5894-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Մաքսային կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Կ-1221-17.12.2025-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ՝

1. Առաջարկում ենք 2-րդ հոդվածով համապատասխան փոփոխությունները կատարել նաև «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասում:

Ըստ այդմ 2-րդ հոդվածը լրացվել է 2-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«2) 2-րդ մասում «փոխհատուցման տուրքերի» բառերից հետո լրացնել «, էլեկտրոնային առևտրի ապրանքների համար մաքսատուրքի, հարկերի» բառերը:»:

2. Առաջարկում ենք շտկել 3-րդ հոդվածի կետերի համարակալումը:

3. 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում՝ «երկրորդ և հինգերորդ պարբերություններով» բառերը փոխարինել «2-րդ և 5-րդ պարբերություններով» բառերով:

4. 19-րդ հոդվածով «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացվող նոր 56.1-ին գլխի՝

ա) 287.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «օպերատորների» բառի փոխարեն

լրացնել «օպերատորի» բառը, իսկ «(պայմանագրերի)» բառը հանել հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի կարգավորումները,

բ) 287.4-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում ենք «կետով» բառը փոխարինել «մասով» բառով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածը բաղկացած է միայն մասերից, ինչպես նաև՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը:

5. Նախագծի 22-րդ և 23-րդ հոդվածների վերնագրերը առաջարկում ենք հանել, կարգավորումներն նախատեսել մասերի տեսքով՝ պահպանելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջները:

Վերոգրյալը հաշվի առնելով 22-րդ և 23-րդ հոդվածների վերնագրերը հանվել են, հոդվածները խմբագրվել են որպես մեկ՝ 22-րդ հոդված 1-ի և 2-րդ մասերով:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ՝

1. Առաջարկում ենք 2-րդ հոդվածի վերնագիրը հանել, համարակալել որպես 1-ին մաս՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջները:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ